

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱԶԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**

1. Ստուգման և գնահատման հանձնաժողովի գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հավակնորդն իրավունք ունի այն բողոքարկել: Բողոքարկման դիմումում հավակնորդը պետք է նշի, թե որ խնդրի գնահատականն է բողոքարկում և ինչ հիմքերով: Հավակնորդի պահանջով տրամադրվում է իր գրավոր աշխատանքի պատճենը:

2. Գրավոր աշխատանքի գնահատման արդյունքը կարող է բողոքարկվել ստուգման արդյունքները հրապարակվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման դիմումը հանձնվում է Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի/այսուհետ՝ Դպրոց/ տնօրենին:

3. Դպրոցի տնօրենը բողոքարկման դիմումներով և գրավոր աշխատանքներով ծրարները հանձնում է Դպրոցի կառավարման խորհրդի նախագահին՝ ծածկագրման աշխատանքները կազմակերպելու և Բողոքարկման հանձնաժողովին փոխանցելու համար:

4. Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է Դպրոցի կառավարման խորհրդի կողմից: Բողոքարկման հանձնաժողովը բաղկացած է երեք դատավորից, որոնք իրենց կազմից ընտրում են նախագահողին: Բողոքարկման հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընդգրկվել Ստուգման և գնահատման հանձնաժողովի անդամները: Բողոքարկման հանձնաժողովի անդամը պարտավոր է Դպրոցի կառավարման խորհրդին անհապաղ գրավոր հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանն իր մասնակցության անկողմնակալության վերաբերյալ:

5. Հավակնորդի գրավոր աշխատանքը և բողոքարկման դիմումը Բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

6. Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դրնփակ ընթացակարգով: Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքային պայմանները ապահովում է Դպրոցի տնօրենը:

7. Բողոքարկման հանձնաժողովը գրավոր աշխատանքը վերստուգում է միայն բողոքարկման դիմումի հիմքերի սահմաններում:

8. Բողոքարկման հանձնաժողովի մոտ անհրաժեշտություն առաջանալու դեպքում Բողոքարկման հանձնաժողովը կարող է հրավիրել հավակնորդին և լսել նրա բացատրությունները բողոքարկման դիմումի վերաբերյալ:

9. Բողոքարկման հանձնաժողովի գնահատականը վերջնական է:

10. Բողոքարկման հանձնաժողովը բանավոր կերպով հավակնորդին պարզաբանում է իր որոշումը, եթե հավակնորդն այդպիսի ցանկություն է հայտնել Դպրոցի տնօրենին հասցեագրված դիմումով:

11. Բողոքարկման հանձնաժողովը հավակնորդների գրավոր աշխատանքների վերստուգման արդյունքները հրապարակում է ոչ ուշ, քան բողոքարկման ժամկետը լրանալուց հետո երկօրյա ժամկետում դատական համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում /www.court.am, «Նորություններ» բաժնում/: